

մանց ողորջանօք և յունանց սպառնալեօք : Այլ քանզի Եղիազար տակաւին վարէր զիւր իշխանութիւն յԵրուսաղէմ , գրեաց առ նա թուղթ Մարտիրոս վարդապետ , եւ ասէ իրր սպառնալեօք , զգուշութեամբ պահեալիք զանօթս վանաց Ս . Յակոբայ , զի մի յաւարի առցեն սպասաւորք դըրանն , որք աւաղիկ գան այդր հրամանաւ Եպարքոսին : Բայց Եղիազար իւր բարեկամ արարեալ զԲղեշխն Երուսաղէմի եւ զԴամասկոսի եւ զայլ իշխանս , միջնորդութեամբ նոցա հաճեցոյց և հաւանեցոյց զԵպարքոսն , մնալ հատատուն յիւրում իշխանութեան յԵրուսաղէմ : Եւ ՚ի հասանիլ անդր սպասաւորաց դրանն , իրեւ կամէին կործանել ըզշինուածան , զորս նորոգ կերտեալ էր նորա , տրովք ոսկւոյ հաճեցոյց զկամս նոցա , և նոքա առ ՚ի կատարումն հրամանաց Եպարքոսին , քակեցին միայն զիոքբրիկ շինուած մի արտաքոյ եկեղեցւոյ և վանաց , և զվարդս ինչ պաշտօգմաց և դարձան յետս :

Իսկ Եղիազար ոչ կամեցաւ այլ եւս մնալ յԵրուսաղէմ . խնդրեաց հրաման յԵպարքոսէն՝ երթալ նստիլ ՚ի Պրուսաքաղաք , չխառնիլ երբէք ՚ի գործ ազգին , և չտալ ումեք մնասս ինչ : Եւ Եպարքոսն գրեաց առ գառաւորն Պրուսայ , զի ՚ի հասանիլ Եղիազարու անդր , պատուով ընկալցին զնա , և մի ոք համարձակեցցի չարիս հասուցանել նմա ընդդէմ օրինաց և կանոնի . ՚ի ՆՕ Բէպիլ ավսր ամսոյ՝ ՆՕՆՆ (1670) : Իսկ Աստուածատուր Պատրիարք Երուսաղէմի հասեալ ՚ի խոր ծերութեան , վախճանեցաւ լի աւուրքք , ՚ի թուին Հայոց 1120 (1671) , և թաղեցաւ ՚ի վանս Ս . Փրկչի՝ վարեալ զԻշխանութիւն Պատրիարքութեան Երուսաղէմի տառապանօք ընդ Եղիազարու եւ ընդ Մարտիրոսի ամս 26 : Ի վերայ տապանի սորա գրեալ կայ , Պատրիարք և առաջնորդ Երուսաղէմի : Զսորա մեծ սկիհն գոհարազարդ աշխարհական տեղակալք եգին ՚ի գրաւի առ Լատինս , զոր զկին ժամանակաց աղատեաց Գրիգոր չլթայակիր :

Իրեւ տեսին միաբանք Երուսաղէմի և ազգն Հայոց , թէ մեկնեցաւ Եղիազար յաթուոյն , եւ Մարտիրոս էասա զՊատրիարքութիւնն Երուսաղէմի , միաբանեցան ամենեքեան եւ գրեցին զիր աղաչանաց առ Եպարքոսն , որ էր յայնժամ յԱղբրիանուպօլիս ՚ի բանակն Արքունի ՚ի տեղին